ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3089-Ա « 31 » հուլիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 3214-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվերով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի 2025 թվականի հուլիսի 28-ի N Ն/39822-25 զեկուցագիրը.

1. Երևանի քաղաքապետի 2021 թվականի սեպտեմբերի 7-ի «Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի N 7149-Ա, 2011 թվականի ապրիլի 21-ի N 1468-Ա, 2012 թվականի հունվարի 27-ի N 665-Ա, 2019 թվականի սեպտեմբերի 20-ի N 3405-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 3214-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված 26-րդ հավելվածի (Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման տարածքային երկրորդ բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-45)) 10-րդ կետի «ա» ենթակետի «/073101.00.6 կամ 073101.00.7/ ճարտարապետություն մասնագիտությամբ» բառերը հանել:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ